ԳԼՈՒԽ ՆԶԱ.

Որում զօրագլուխ և կամ զինուոր 'ի ժամանակի խաղաղութեան ընդդիմանայցէ Տեառն իւրոյ, իսկոյն անկցի 'ի ազատութենէ և իշխանութենէ մտցէ 'ի բանտ զի դատեսցի։

ԳԼՈՒԽ ՆԶԲ.

Ամենայն զինուոր պաշտօնեայ և կամ զինուորք պաշտօնեայք 'ի ժամանակի պատերազմի փախեցեալ 'ի գնտէ իւրմէ առ թշնամիս հայոց, եթէ ըմբռնեսցի, եթէ ըմբռնեցեալն գտցի միմիայն մի մեռցի, եթէ իցեն բազումք որոնելով հաստատեսցեն նախագուշակք և առաջնորդք մեռցեն, մնացորդքն գան յարիցեն և յապա գտցեն ազատութիւն։

ԳԼՈՒԽ ՆԶԳ.

Ամենայն ոք 'ի ժամանակի պատերազմի և կամ խաղաղութեան եթէ զինուոր, եթէ աշխարհական եթէ կողոպտեսցէ հաւկիթ մի և այլ ամենայն զոր ինչ, և կամ եթէ ճարակեսցէ արտս ում ոք որ իցէ գանս ընկալցի, և հատուցանել պարտ է իրն այն, և կամ արժանն երկայնատիք առ տեառն ընչից։